ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

03.08.2020թ. *Քաղաքացիական գործ*
ք. Երևան *թիվ ԵԴ/5210/02/19*

ՈՐՈՇՈՒՄ
Թիվ ԵԴ/5210/02/19 քաղաքացիական գործի ընդդատությունը որոշելու մասին

1.Գործի դատավարական նախապատմությունը և ընդդատության հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

«Իրավաբան» ՍՊԸ-ի (իրավաբանական հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, Չարենցի փող., Շ/2/16, գործունեության վայրի հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Չարենցի փող., Շ/2/16, ՀՀ, ք. Երևան, Տերյան 91) և Արևիկ Գրիգորյանի միջև 23.03.2016թ. կնքվել է թիվ 04/16 աշխատանքային պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր), որի 1.1 կետի համաձայն՝ «Իրավաբան» ՍՊԸ-ն Արևիկ Գրիգորյանին տրամադրել է նույն պայմանագրի 5-րդ կետում նշված աշխատանքը և պարտավորվել է վճարել նրա կատարած աշխատանքի համար...: Պայմանագրի 1.5 կետի համաձայն՝ աշխատողը Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարում է Գործատուի՝ Երևան քաղաքի Տերյան 91 հասցեում գտնվող մասնաճյուղում:

Արևիկ Գրիգորյանը (այսուհետ նաև՝ Հայցվոր) 25.02.2019թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Իրավաբան» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ վերջնահաշվարկի՝ չվճարված աշխատավարձի և արձակուրդային օրերի համար հաշվարկված գումարների բռնագանձման պահանջների մասին:

Հայցադիմումում Պատասխանողի գտնվելու վայրի հասցեն նշվել է՝ «ք. Երևան, Տերյան փող., 91 շ., 2-րդ հարկ, 17 սեն.»:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան (դատավոր՝ Գ. Մազմանյան) (այսուհետ նաև՝ Դատարան) 07.03.2019թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և որոշվել է գործը նախապատրաստել դատաքննության:

Դատարանը 23.01.2020թ. որոշում է կայացրել թիվ ԵԴ/5210/02/19 քաղաքացիական գործով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին:

Դատարանի 23.01.2020թ. որոշմամբ թիվ ԵԴ/5210/02/19 քաղաքացիական գործը նշանակվել է դատաքննության:

19.06.2020թ. Դատարանը որոշում է կայացրել գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին հետևյալ պատճառաբանությամբ.

«...Պատասխանող «Իրավաբան» ՍՊԸ-ն 15.06.2020թ. դատարան է ներկայացրել գործն ըստ ընդդատության այլ դատարանի քննությանը հանձնելու մասին միջնորդություն և հայտնել է, որ «Իրավաբան» ՍՊԸ-ի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Չարենցի փող., շ. 2/16 հասցեն, ուստի հայցը պետք է ներկայացվեր պատասխանողի գտնվելու վայրի դատարան: Դատարանին խնդրել է թիվ ԵԴ/5210/02/19 քաղաքացիական գործն ըստ ընդդատության հանձնել այլ դատարանի քննությանը:

Դատարանը, ուսումնասիրելով միջնորդությունը և կից ներկայացված փաստաթղթերը, պարզեց, որ պատասխանող «Իրավաբան» ՍՊԸ-ի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Չարենցի փող., շ. 2/16, որը չի մտնում Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում, գործը վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ, ուստի դատարանը գտնում է, որ այն պետք է հանձնվի ըստ ընդդատության Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը»:

06.07.2020 թվականին թիվ ԵԴ/5210/02/19 քաղաքացիական գործը մակագրվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Գրիգորյանին:

15.07.2020 թվականի որոշմամբ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ հետևյալ հիմնավորմամբ.

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով սահմանված քաղաքացիական գործերի տարածքային ընդդատության ընդհանուր կանոնի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, (...) առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ նույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածով սահմանել է այլընտրանքային ընդդատության կանոնները: Մասնավորապես՝ նշված հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կատարման վայրի վերաբերյալ ուղղակի նշում պարունակող պայմանագրից բխող հայցը կարող է ներկայացվել պայմանագրի կատարման վայրի առաջին ատյանի դատարան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը վերադարձնում է հայցադիմումը, եթե՝

գործն ընդդատյա չէ տվյալ առաջին ատյանի դատարանին կամ ենթակա է քննության սնանկության դատարանում:

Վերոնշյալ նորմերից հետևում է, որ կատարման վայրի վերաբերյալ ուղղակի նշում պարունակող պայմանագրից բխող հայցը կարող է հարուցվել նաև կատարման վայրի դատարան և բոլոր այն դեպքերում, երբ հայցը հարուցվել է ընդդատության կանոնների խախտմամբ, այն ենթակա է վերադարձման: Տվյալ դեպքում կողմերի միջև կնքված թիվ 04/16 աշխատանքային պայմանագրի 1.5-րդ կետն ուղղակի նշում է պարունակում կատարման վայրի վերաբերյալ, ըստ որի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վայր է սահմանվել գործատուի՝ Երևան քաղաքի Տերյան 91 հասցեում գտնվող մասնաճյուղը, և կատարման վայրի առաջին ատյանի դատարանն այն ընդունել է վարույթ:

... Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 23.01.2020թ. որոշումներ է կայացրել ապացուցման պարտականությունը բաշխելու, ինչպես նաև գործը դատաքննության նշանակելու մասին, որից հետո՝ 19.06.2020թ. որոշում կայացրել գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին»:

Թիվ ԵԴ/5210/02/19 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 27.07.2020 թվականին:

2. Կիրառելի իրավական նորմերը, պատճառաբանությունները և եզրահանգումը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 21-րդ հոդվածը սահմանում է քաղաքացիական գործերի ընդհանուր տարածքային ընդդատության կանոնները, որի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ նույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Օրենսգրքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կատարման վայրի վերաբերյալ ուղղակի նշում պարունակող պայմանագրից բխող հայցը կարող է ներկայացվել պայմանագրի կատարման վայրի առաջին ատյանի դատարան:

Օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը հանձնվում է այլ դատարանի քննությանը, եթե պատասխանողը

մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:

Նշված իրավակարգավորումների վերլուծությունից հետևում է, որ Օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի դատարան: Ընդ որում, օրենսդիրը սահմանել է նաև, որ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում հայցադիմումը կարող է ներկայացվել պատասխանողի բնակության վերջին հայտնի վայրի դատարան:

Նշված ընդհանուր կանոնից բացառությունները սահմանված են Օրենսգրքի 22-րդ, 23-րդ և 24-րդ հոդվածներով և վերաբերում են այլընտրանքային, պայմանագրային և բացառիկ տարածքային ընդդատությանը:

Այսպես՝ Օրենսգրքի 22-րդ հոդվածում օրենսդիրն իրավունք է վերապահել հայցվորին որոշակի առանձնահատուկ իրավիճակներում հայցը պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի դատարանի փոխարեն ներկայացնել Օրենսգրքով նախատեսված այլ դատարան: Ընդ որում, նշված իրավունքը կրում է հայեցողական բնույթ և պայմանավորված է հայցվորի դրսևորած կամահայտնությամբ:

Հայցադիմումը վարույթ ընդունելիս, ի թիվս այլ հանգամանքների, դատարանը պետք է պարզի՝ արդյոք ներկայացված հայցադիմումում պահպանվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված տարածքային ընդդատության կանոնները, և միայն այդպիսիք պահպանված լինելու դեպքում որոշում կայացնի հայցադիմումը վարույթ ընդունելու մասին:

Այդուհանդերձ, եթե դատարանը գործը քննելիս պարզում է, որ այն վարույթ է ընդունել Օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ, ապա այդ գործը պետք է հանձնի ըստ ընդդատության այլ դատարանի: Ընդ որում, նշված դեպքում գործն ընդդատությամբ այլ դատարանի հանձնելու համար բավարար չէ միայն Օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ գործը վարույթ ընդունելու փաստի առկայությունը, այլ անհրաժեշտ է նաև, որ պատասխանողը ներկայացնի իր առարկությունը՝ գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ: Պատասխանողն իր առարկությունները կարող է ներկայացնել ոչ թե դատավարության ցանկացած փուլում՝ իր հայեցողությամբ, այլ՝ մինչև դատարանի կողմից ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացվելուց հետո պատասխանողն այլևս չի կարող այդ հարցի կապակցությամբ ներկայացնել առարկություններ, իսկ Դատարանը՝ կայացնել որոշում գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին, քանի որ ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործն այլ դատարանի քննությանը հանձնելու վերաբերյալ

հարցը լուծվում է, ընդդատության վերաբերյալ առարկությունները ներկայացվում են, իսկ քաղաքացիական գործն ըստ ընդդատության ուղարկվում է բացառապես մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է արձանագրել, որ քաղաքացիական գործն այլ դատարանի քննությանը կարող է հանձնվել ներքոշարադրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1. քաղաքացիական գործն ի սկզբանե վարույթ է ընդունվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ,

2. պատասխանողը գործի տարածքային ընդդատության վերաբերյալ ներկայացրել է իր առարկությունները,

3. առարկությունները ներկայացվել են մինչև դատարանի կողմից ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

Միայն նշված երեք պայմանների միաժամանկյա առկայությամբ գործն այլ դատարանի քննությանը հանձնված լինելու դեպքում է հնարավոր փաստել, որ գործն ըստ ընդդատության ուղարկած դատարանը չի հանդիսանում այն պատշաճ դատարանը, որը տվյալ գործով պետք է իրականացնի արդարադատություն:

Գործում առկա նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Հայցվորի և Պատասխանողի միջև 23.03.2016թ. կնքվել է թիվ 04/16 աշխատանքային պայմանագիրը, որի 1.5 կետով սահմանվել է, որ ***աշխատողը Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարում է Գործատուի՝ Երևան քաղաքի Տերյան 91 հասցեում գտնվող մասնաճյուղում:*** Միաժամանակ Պայմանագրում որպես Պատասխանողի իրավաբանական հասցե նշված է՝ «ՀՀ, Սյունիքի մարզ, Չարենցի փող., Շ/2/16», իսկ որպես գործունեության վայրի հասցե՝ «ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Չարենցի փողոց Շ/2/16, ՀՀ, ք. Երևան, Տերյան 91»:

07.03.2019 թվականին Դատարանը կայացրել է հայցադիմումը վարույթ ընդունելու և գործը դատաքննության նախապատրաստելու մասին որոշում:

23.01.2020թ. Դատարանը որոշում է կայացրել թիվ ԵԴ/5210/02/19 քաղաքացիական գործով ապացուցման պարտականությունը բաշխելու և գործը դատաքննության նշանակելու մասին:

Վերը նշված փաստական հանգամանքները համադրելով սույն որոշման իրավական վերլուծությունների հետ՝ հարկ է արձանագրել հետևյալ.

Սույն գործում առկա Պայմանագրի ուսումնասիրությունից հետևում է, որ այն բովանդակում է կատարման վայրի վերաբերյալ ուղղակի նշում, հետևաբար Օրենսգրքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով նշված պայմանագրից բխող վեճը հայցվորի նախընտրությամբ կարող է ներկայացվել նաև պայմանագրի կատարման

վայրի առաջին ատյանի դատարան: Սույն պարագայում, նկատի ունենալով, որ Պայմանագրում, որպես Պայմանագրի կատարման վայր, սահմանվել է Պատասխանողի՝ Երևան քաղաքի Տերյան 91 հասցեն, որը գտնվում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում, հետևաբար Հայցվորն իրավաչափորեն Պայմանագրից բխող վեճի կապակցությամբ հայցը հարուցել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան: Նման պայմաններում թիվ ԵԴ/5210/02/19 քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ է ընդունվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնի պահպանմամբ:

Բացի այդ, Պատասխանողը գործն ըստ ընդդատության այլ դատարան ուղարկելու մասին միջնորդությունը, որն ըստ էության բովանդակում է առարկություն թիվ ԵԴ/5210/02/19 քաղաքացիական գործի տարածքային ընդդատության վերաբերյալ, ներկայացրել է թիվ ԵԴ/5210/02/19 քաղաքացիական գործով Դատարանի կողմից ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացված լինելուց հետո, մինչդեռ Օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նման առարկությունը, որը կարող էր հիմք հանդիսանալ գործն այլ դատարանի քննությանը հանձնելու համար, կարող էր ներկայացվել մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

Այսպիսով, սույն գործի փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ՝

1. թիվ ԵԴ/5210/02/19 քաղաքացիական գործն ի սկզբանե վարույթ է ընդունվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ընդդատության կանոնների պահպանմամբ,

2. գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին որոշումը կայացվել է թիվ ԵԴ/5210/02/19 քաղաքացիական գործով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշման կայացումից հետո:

Վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել, որ թիվ ԵԴ/5210/02/19 քաղաքացիական գործը Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ըստ ընդդատության հանձնելու համար գործում բացակայում են անհրաժեշտ փաստական և իրավական ամբողջական հիմքերը, ուստի թիվ ԵԴ/5210/02/19 քաղաքացիական գործը պետք է հանձնել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները, և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ ԵԴ/5210/02/19 քաղաքացիական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

2. Սույն որոշումը և թիվ ԵԴ/5210/02/19 քաղաքացիական գործի նյութերն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

3. Որոշման օրինակն ուղարկել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ